№ 275 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 — 1901 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 № 275

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(30-ՐԴ ՏԱՐԻ)

ՅՈՒԱՋԻԿԱԾ **1902** ԹԻԱԿԱՆԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տան եւ մէկ եւ տան ամվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամվանը՝ 8 ր., եօթ ամվանը՝ 7 ր., վեց ամվանը՝ 6 ր., հինգ ամվանը՝ 5 ր., չորս ամվանը՝ 4 ր., երեք ամվանը՝ 3 ր., երկու ամվանը՝ 2 ր. եւ մի ամվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՆԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ՈՉ ԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր ճանապարհ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանական դահլիճից. Նամակ Գանձակից. Նամակ Բալախանիից. Նամակ Խարբերդից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Կեանքի վէպերը։

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

Երէկ, դեկտեմբերի 11-ին, կովկասեան փառավարչապետ իշխան Գոլիցին, Թիֆլիս-Կարսի երկաթուղով ճանապարհ ընկաւ դէպի Երեւանեան նահանգ՝ ներկայ գտնվելու Երեւանեան երկաթուղային գծի բացման հանդէսին։

Երկաթուղին արդէն երկու շաբաթ է, ինչ սկսել է իր գործունէութիւնը եւ վերցնում էր Ճամբորդների յատուկ մարդատար վագոններում. բայց դեռ ունէր թերի կողմեր եւ միայն այժմ նա սկիզբն է դնում կանոնաւոր գնացքների շարժման։ Անկասկած դեռ մի երկու ամիս էլ անհրաժեշտ են, որպէս զի կարգի բերվեն բոլոր էյարանները եւ լրացնվեն մանրամասն կարիքները. սակայն դրանք երկրորդական բաներ են, որոնք չեն խանգարի կանոնաւոր երթեւեկութիւն հաստատելուն։

Մենք առիթ ենք ունեցել մի քանի անգամ խօսելու Երեւանեան երկաթուղու նշանակութեան մասին եւ պարզել ենք տնտեսական այն փոփոխութիւնների բնաւորութիւնը, որոնք առաջ կը գան երկաթուղու շնորհիւ։ Մենք և ապագայում կը զբաղվենք այն հարցերով, որոնք հանդէս կը գան, իբրև հետեւանք փոփոխված տնտեսական պայմանների։

Երեւանեան նահանգի ազգաբնակութիւնը պահպանել է իր մէջ հին հարուստ կուլտուրայի հետքեր եւ մի քանի արդիւնաբերութիւնների մէջ ցոյց է տուել առաջադիմութեան նշաններ։ Սակայն այժմ նա պէտք է շփվի աւելի ուժեղ մրցակիցների եւ կատարելագործված կազմակերպութիւնների հետ, քան մինչեւ այժմ նա տեսել է։ Եթէ մինչեւ այսօր նրա հետ մրցողը Հարեւան Պարսկաստանի եւ Թիւրքիայի թմրած եւ ճնշված կուլտուրան էր, այսուհետեւ նա պէտք է գործ ունենայ եւրոպական գիտութեամբ եւ փորձով զինված ների հետ։

Այդ հանգամանքը մեր առաջ է դնում մի հերթական էական պարտաւորութիւն՝ դէն գցել այն դանդաղկոտութիւնը, որով մինչեւ այժմ մենք կամաց-կամաց շարժվում էինք եւ սկսել մի շարք լուրջ ձեռնարկութիւններ բարւոքելու տնտեսական կեանքի պայմանները, բարձրացնելու արհեստը եւ տեղական արդիւնաբերութեան զարգացման համար ստեղծելու հաստատ հիմունքներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Շարունակութիւն)

Մեղադրական թուղթը, որ պարունակում է մօտ 50 մեծ երես, եւ որի ընթերցումը տեւեց մօտ 5 ժամ, վերջանում է հետեւեալ եղրակացութեամբ։

Մեղադրական իշխանութիւնը, նախնական քննութեան տուած հետեւանքները ի նկատի ունենալով, գտնում է, որ անկարելի է քաղաքային վարչութեան դատվող անդամներին մեղադրել շահասիրական դրդումով կատարած գործողութիւնների, հասարակական փողեր իւրացնելու եւ ուրիշ այդպիսի գեղծումների մէջ։ Մեղադրական իշխանութիւնը մեղաւոր է գտնում մեղադրեալներին միմիայն անփութութեան եւ զանցառութիւնների մէջ։ Բոլոր մեղադրեալներին, այսինքն Թիֆլիսի հանգուցեալ քաղաքագլուխ Դ. Եւանգուլովին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Սեր. Խոսրովանին եւ վարչութեան նախկին անդամներ՝ Ա. Իվանենկոյին, իշխ. Ալ. Երկայնաբազուկ-Ադրութեանին եւ Իւր Վերմիչեանին, այն բանում, 1) որ նրանք անփութութեամբ չեն կազմել տուել մի ընդհանուր հրահանգ առեւտրական-տնտեսական պօլիցիայի գործակալների համար, որով նրանք ղեկավարվէին քաղաքային դրամական տուրքերն առնելիս, եւ առհասարակ ճիշդ հաշուապահութիւն չեն մացրել այդ գործի մէջ եւ բաւականաչափ չեն հսկել, այնպէս որ առեւտրական-տնտեսական պօլիցիայի գործակալները տուրքերը առնում էին ըստ իրենց հայեցողութեան եւ կարող էին զեղծումներ գործել, որքան ուզենային. 2) քաղաքային վարչութիւնը անփութութեամբ չէ աշխատել կազմել ընդհանուր ցուցակ քաղաքային տնչարժ կալուածքների, այնպէս որ քաղաքային վարչութիւնը ինքը չը գիտէր, թէ ինչ կալուածքներ են պատկանում քաղաքին, եւ եղել են դէպքեր, երբ վարչութիւնը պատահմամբ է իմացել, որ այս ինչ կալուածքը քաղաքապատկան է, 3) քաղաքային վարչութիւնը ինչպէս պէտք է չէր վերահսկում քաղաքապատկան ազատ հողաբաժիններին, այնպէս որ մասնաւոր մարդիկ ազատ-արձակ տիրանում էին այդ հողաբաժիններին. 4) դանդաղութեամբ էին կազմում Թիֆլիս քաղաքի ընդհանուր յատակագիծը, որի շնորհիւ խանգարվում էր քաղաքային կալուածքների կառավարութիւնը. 5) քաղաքային վարչութիւնը միջոցներ ձեռք չէր առնում չահագործելու քաղաքապատկան հողերից մի քանիսը յօգուտ քաղաքային դրամարկղի. 6) չէր աշխատում ուեւլացնել Երեւանեան հրապարակի վրա գտնվող քաղաքային տան մէջ վարձով տրվող խանութների գինը. 7) չէր աշխատում ստանալ քաղաքային տուրքերից մնացած ապառիկները. 8) տախտակաշէն խանութները վարձով էր տալիս առանց գրաւոր պայմանների. 9) չէր կազմել այդ խանութների, ինչպէս նաեւ քաղաքային հողաբաժինների վարձակալներն լիակատար եւ ճիշդ ցուցակը եւ 10) առհասարակ միջոցներ չէր ձեռք առնում ստանալու գնահատական տուրքի ապառիկները, որոնք 1898 թուի վերջին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ՎԷՊԵՐԸ

ՀՍԿԱԾ ԾԻՄԱՐԸ

(Վերջ)

—Մայրիկ. մայրիկ.

Երեխան կրկին յայտնվեց իր տեղում, կրկին դեկնեց իր թաթիկները, ձգվեց օդի մէջ, բայց այս անգամ նրան ոչ ոք չը նայեց, նրա ձայնը ոչ ոք չը լսեց, ոչ մայրը եւ ոչ ամբոխը, որ նայում էր յուզված, ուշակորոյս։ Այդ կինը այնքան գեղեցիկ էր այդ վտանգաւոր բարձրութեան վրա, այնքան գրաւիչ էր այդ հողային մարմինը, որ նայողներն անկարող էին այլ կողմ ուշք դարձնել։ Դարձեալ մի ատիճան, մնաց միայն երկուսը, որքան բարձր է արդէն, իսկ եթէ յանկարծ ընկնի... Գերեզմանական լռութիւն իջաւ դահլիճում, ոչ մի չչուկ, մարդիկ չնչերը բռնել էին, նայում էին անթարթ դէպի վեր, ուր տարածութեան մէջ ողջ լուսով ծրագրվում էր այդ չքնաղ կանացի պատկերը, որ չը գիտես ինչու կախված էր այնտեղ անշարժ ու սառած։ Կային եւ այնպիսիները, որոնք այլ եւս ասանդուղքն էլ չէին տեսնում, այլ միմիայն այդ գեղեցիկ պատկերը, որ լողում էր վերի լոյսերի մէջ ինչպէս մի անմարմին ոգի։

Դարձեալ մի ատիճան, եւ մնաց վերջինը։ Գինը կանգ առաւ, յոգնած էր արդեօք, վախենում էր բարձրութիւնից, թէ գլուխը չշվեց էրի օդի խեղդող ծանրութիւնից. ակներեւ էր, որ նա դժուարանում էր վերջին ատիճանը բռնել. աչքերը յառած դէպի մի կէտ, բոլոր ուշքը լարած, նա նայում էր, նայում էր եւ կարծես էլ ոչինչ չէր տեսնում. այժմ ասանդուղքը դողում էր նրա ձեռքերի մէջ եւ ոտքերի տակ կամաց-կամաց անդունդ էր բացվում։

Իսկ ամբոխը անհամբեր եւ դժգոհ էր այս ապատողական դրութիւնից, որ այնպէս ողմում էր կրծքերը, այնպէս խեղդում էր կոկորդները, այնպէս ճնշում էր շնչառութիւնը, անտանելի էր, չնայած աչքերը ասես ուղում էին ընկից դուրս ընկնել, ճռթռվել, մարդիկ հեւում էին անհամբերութիւնից, սարսափից եւ հեռաքրքրութիւնից։ «Կամ ընկնի կամ բարձրանայ, միայն թէ վերջ առնի այս կացութիւնը», մտածում էին հազարաւոր գլուխներ։

Իսկ կինը միմիայն նայում էր վերջին ատիճանին, նայում էր եւ ոչ բարձրանում էր ու ոչ ընկնում, այլ դողում էր, նրա գլխում այդ ոսկէին ստեղծված էր մի քաոս, նա այլ եւս չէր մտածում, չէր տեսնում, չէր լսում եւ չը գիտէր ուր է ինքը։

—Մայրիկ, մայրիկ. վերջին լսվեց մանկան ձայնը։

Այս անգամ դժգոհութիւնը իր գագաթնակէտին հասաւ, ներքեւում խուլ չչուկ բարձրացաւ, ոմանք ծափահարեցին, նրանք չիմանալով ինչու, ուրիշներն ակամայ ոտքի կանգնեցին, բայց յանկարծ մի զարհուրելի բան պատահեց,—ասանդուղքը երերաց թափով յետ ու առաջ, ապա ծռվեց մի կողմ. վերեւ, գմբէթի տակ, մի սուր ճիչ լսվեց եւ կինը, տարածութեան մէջ պտոյտներ գործելով, գնդակահար թռչնի պէս գլորվեց դէպի վայր։ Զորս կողմից ծառայակիցները վրա վազեցին, իրար խառնվեցին, ոմանք ջուր էին բերում, ուրիշները կանչում աննպատակ, իսկ բազմութիւնը միաձայն «ուհ» արեց ու քար կարեց կարծես։

Անկենդան Զիզիին տարան հրապարակից։

Լռութիւնը շարունակվում էր։

—Մայրիկ, մայրիկ... Երեխան ճչում, լալիս էր այս անգամ վարագոյրի ետեւում։

Յայտնվեց կառավարիչը։

—Դուք տեսաք մեր զարհուրելի ձախորդութիւնը, ասաց նա յուզված ձայնով, ինձ մնում է միայն աւելացնել, որ խեղճ կինը մեռաւ... Արդեօք հասարակութիւնը կամենում է, որ ներկայացումը շարունակվի, թէ ոչ։

Բազմութիւնը լուռ էր։

—Մայրիկ, մայրիկ...

Ամբոխը համր էր, սարսափի, թէ գթութեան պէս մի անորոշ բան էր խաղում այդ գլուխներից բարձր գաղջ մթնոլորտի մէջ, այնտեղ, ուր մի քանի րոպէ առաջ կանացի օրրուն պատկերն էր սաւառնում։ Բիրտ զգայական հաճոյքին դէմ առ դէմ կանգնած էր այժմ մերձաւորի ցաւն ու խեղճութիւնը, որ լալիս էր այն վարագոյրի ետեւում եւ իր դերագոյն իրաւունքն էր պահանջում աշխարհից։

—Դէթ մի քիչ գութ, դէթ մի քիչ յարգանք։ Բայց գլուխները դեռ շատ էին տաք. վայելքի տենդը դեռ այրում էր ճակատները եւ գութն ու յարգանքը դէմ առ դէմ կանգնած էին բիրտ կրքերի հանդէպ եւ ամբոխը չը գիտէր ինչ պատասխանէ։ Դեռ որչափ հեռաքրքիր խաղեր էին տեղի ունենալու, փող էլ էր վճարված, էլի կանայք կան։ Ամբոխը լուռ էր. հօտային վիճակ ստեղծվեց, այժմ որ եւ է ձայն իր ուզած կողմը կը քաշէր այդ բոլոր ապուշ կլորած, չչմած գլուխները, իւրաքանչիւրը զայրանում էր իր հարեւանի վրա, որ առաջինը չէ ճչում, եւ լռութիւնը շարունակվում էր, եւ այդ վճռող ձայնը չը կար։

Կառավարիչն ապատում էր։

—Շարունակել։

Ո՞վ ասաց, ո՞վ արտասանեց այդ անիրաւ բառը, ո՞վ... Մի ողորմելի արարած, մի փոքրիկ կարճահասակ մարդ, յիմար աչքերով, յիմար դէմքով եւ այնքան յիմար ձայնով ասաց, որ կարծես ինքն էլ վախեց իր ձայնից ու կծկվեց, բայց ինչ փոյթ, դա մի փոթորկի նշան էր։

—Շարունակել, որոտացին մի քանի շարքեր, շարունակել, ոռնաց հազարաւոր բազմութիւնը։

—Մայրիկ, մայ...

—Շարունակել, պատերը դղրդացին այդ կատաղի մռնչոցից։

—Երեխայի ձայնը, արտասվող խեղճութեան ձիչը կորաւ, խեղդվեց հազարաւոր կոկորդներից դուրս թափվող այդ խելագար աղաղակների մէջ։

Խաղը վերսկսվեց, գութն ու յարգանքը փախան այդ ապանիչ մրթնոլորտից։ Իշխողը բիրտ կիրքն էր ու հռհռոցը։

Եւ պատվում էին ձիերը, տանելով իրանց վրա հոլանի մարմիններ, եւ թնդում էր դահլիճը բուռն ծափահարութեամբ։

Ամբոխը ուրախ էր, ամբոխը զուարճանում էր։

Հակայ յիմարը...

Ա. Ահարոնեան

հանում էին 120,000 ռուբլի գումարի։ Այդ բոլոր զանցառութիւնները նախատեսված են քրէական պատժագրքի 411 յօդուածում։

Քաղաքային վարչութեան նախկին անդամներ Իվանենկո, Վերմիշեվ եւ իշխ. Արղութեան մեղադրվում են, բացի դրանից, այն բանում, որ անփոյթ են գտնվել սուր-վարակիչ հիւանդութիւնների համար շինվող բարակների կառուցման եւ սպանդանոցի վերաշինութեան ժամանակ։ (Յօդ. 411)։

Քաղաքագլուխ Գր. Եւանգուլեան եւ քաղաքային վարչութեան նախկին անդամներ իշխ. Արղութեան, Իվանենկո եւ Վերմիշեվ մեղադրվում են նաեւ նրանում, որ անփութութեամբ եւ անզգուշութեամբ օխալ տեղեկութիւններ են տուել ձիաքարշը քաղաքապատկան դարձնելու համար վերցվելիք պարտքի թոյլատրութիւնը ստանալու համար ներկայացված զեկուցման մէջ։

Այնուհետեւ Իվանենկո, իշխ. Արղութեան եւ Վերմիշեվ մեղադրվում են առանձին-առանձին նոյնանման զանցառութիւնների մէջ, որոնք նախատեսված են պատժագրքի 339, 344, 404 եւ 411 յօդուածներով, որոնցով նախատեսված են հետեւեալ պատիժները՝ յանդիմանութիւն, արձակումն պաշտօնից եւ բանտարկութիւն։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Դեկտեմբերի 2-ին

Ինչպէս յայտնի է, Գանձակի քաղաքային վարչութիւնը ձեռնամուխ է եղել մի հոյակապ շինութեան տեղական վեցդասեան քաղաքային դպրոցի համար։ Իր ժամանակին ժամուը գովասանքով խօսեց այդ վերին ատիճանի օգտաւէտ ձեռնարկութեան մասին, որով Գանձակի քաղաքային վարչութիւնը խոստանում է տալ քաղաքային դպրոցի աշակերտներին առատ, մաշուր օդ, լոյս ու մաւոր ու ֆիզիքական զարգացման այլ անհրաժեշտ նպատաւոր պայմաններ, որոնցից բազմաժարդ դպրոցը այժմ զուրկ է բոլորովին, գտնվելով նեղ ցածր, խոնաւ ու կիսախաւար սենեակներում։

Շինութեան գործը անմիջապէս ղեկավարում է մի շինարարական յանձնաժողով, կազմված մի քանի քաղաքացիներից, քաղաքային վարչութեան երկու պաշտօնեայից, դպրոցի տեսչից ու մի ուսուցչից։ Յանձնաժողովը վերաբերվում է իր պարտաւորութիւններին մեծ եռանդով ու բարեխղճութեամբ։ Շինութեան եռայարկ միմիարի կմախքը արդէն վերջացրած է ու սկսել է ներքին կարգաւորումը։ Շատ հաւանական է, որ առաջիկայ ուսումնարանական տարվայ սկզբում, եթէ քաղաքը շարունակէ անընդհատ միջոցներ բաց թողնել, նա բոլորովին պատրաստ կը լինի, դպրոցը կը տեղափոխվի նոր շինուածը ու կազատվի այն նկուղներից, որոնց մէջ պատսպարվում է նա այժմ, որոնց մէջ երկար տարիների ընթացքում քայքայվել է շատ աշակերտների ու ուսուցիչների առողջութիւն։

Այժմ, երբ շինութիւնը հասնում է իր աւարտման, մեր քաղաքի ունեւոր, բուրժուա դասակարգի մէջ նկատվում է մի ցանկութիւն, ոչ, աչքի առաջ առնելով նրա ծնող պատճառները, դայրացուցիչ կարելի է համարել։ Մեր բուրժուաները, որոնց ալարուիզմը շատ խոշորացոյցային է, իսկ էգոիզմը հրէշային, որոնք շատ հմուտ են ուրիշի համար մանր բրգելում, իսկ իրանց համար շատ մեծ, գրտնում են, որ քաղաքային դպրոցի աշակերտները, այդ «բոբիկները» (բոսեակի), ինչպէս ասում են նրանք, անարժան են այնպիսի փառահեղ հոյակապ շինութեան մէջ սովորել, ինչպիսին այժմ կառուցվում է նրանց համար, որ նրանց տեղն է խոնաւ ու խաւար նկուղները, իսկ հոյակապ շէնքը պէտք է Յառաջ այն դասակարգին, որը, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս եւ մեզ մօտ, յայտնի ու հաչկված է իր հոյակապ փորով ու իր կաշուից դուրս գտնվող շահերով զգացվելու անընդունակ սրտով, որի համար անհասկանալի ու ծիծաղելի են ընդհանրական բարօրութիւն ու բարեկեցութիւն ասվող բառերը։

Այժմ այդ դասակարգի մարդիկ ցանկութիւն են յայտնում սւ ամեն կերպ աշխատում են համոզել քաղաքային վարչութեան անդամներին ու դումայի ձայնաւորներին, որ նոր շինութեան մէջ բացվի ռէալական կամ տեխնիկական հաստատութիւն, որը իր նիւթական պահանջներով մատչելի կը լինի միմիայն ունեւոր դասակարգին ու այդ պատճառով, չը նայած իր անհրաժեշտ օգտաւէտութեան, կը ծառայէ միմիայն նրա շահերին։ Այդ դասակարգի համար մեր քաղաքում վաղուց արդէն գոյութիւն ունեն աղայոց ու օրիորդաց գիմնազիաներ, որոնց աշակերտների ու աշակերտուհիների թիւը միասին վերցրած անդամ փոքր է քաղաքային դպրոցի աշակերտների թիւից։ Զուսնեւոր, մանր առեւտրական, արհեստաւոր ու մշակ դասակարգի համար գոյութիւն ունի միմիայն մի դպրոցական հաստատութիւն, քաղաքային դպրոցը, որտեղ սովորում են այժմ մօտ 650 աշակերտներ, որոնց մէջ կան նաեւ գիւղացիներ գաւառից ու նահանգից։ Աշակերտների թիւը տարէց տարի ստուարանում է ու դպրոցի կրթական բարերար ազդեցութիւնը աւելի ու աւելի նկատելի է դառնում ժողովրդի այն խաւերում, որոնք տալիս են նրան աշակերտներ։ Ահա «պլեբէյ» աշակերտների այդ մասսային մեր քաղաքի մի քանի իրանց գրլխներին սատանի «զօռ» տուող մնծամիտ «ղեկավարներ» անարժան են համարում օգտվել այն մտաւոր ու ֆիզիքական զարգացման համար, նպատաւոր պայմաններից, որոնց մէջ կը գտնվեն նրանք, եթէ քաղաքային դպրոցը տեղափոխվի նոր շինութիւնը։ Այդ «ղեկավարները», չը նայած, որ արտաքուստ կատարեալ քաղաքակիրթ մարդկանց կեղեւ են կրում, ներքուստ հինովին տոգորված են «Հ։ յ թան-բազարեան» աշխարհայեցողութեամբ, որով չուսնեւորը,—խեղճ արհեստաւորը, մշակը, մանր առեւտրականը, գիւղացին,—լրիւ մարդ չէ համարվում։ Նրանց համար մի շատ տարօրինակ, զայրացուցիչ բան է համարվում այն, որ քաղաքային վարչութիւնը պատրաստ է կառուցանում ժողովրդի, հասարակ ամբոխի զաւակների համար, ու այժմ նրանք միջից կէս են լինում, որ այդ բարի գործի դլխին քար գցեն։ Ցուսով ենք, որ այդ չի աջողվի նրանց։ Գանձակի քաղաքային դումայի ու վարչութեան մէջ կան լուրջ, ընդհանրական շահերն ըմբռնող մարդիկ, որոնք իրանց ձեռնարկած բարի գործը կը ծառայեցնեն նրա իսկական նպատակին, ազատելով բազմաժարդ քաղաքային դպրոցը այժմեան նկուղներից ու տեղափոխելով նրան այն շինութեան մէջ, որը կառուցվում է, ըստ քաղաքային վարչութեան խոստման, յատկապէս նրա համար։

Հայոց մատենագրութեան դիւցազն Ալիշանի հոգեհանգստի արգելումը Գանձակում մեծ զայրոյթ պատճառեց մեծ Նահապետի բոլոր համակրողներին։ Այդ միակ աչքի ընկնող գործն է, որը կատարեց Անանիա եպիսկոպոսը այժմեան իր փոխանորդութեան ընթացքում ու որի շնորհով իր վրա գրաւեց մասնաւոր ուշադրութիւնը։ Մեր կարծիքով Ալիշանի մեծութիւնը մի ինչ որ տարերային վեհութիւն է ստանում փոքրոգի մարդկանց այդպիսի ոգնձգութիւններից դէպի նրա նուիրական յիշատակը։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻՑ

Դեկտեմբերի 7-ին

Այս ամառ էր, որ բալախանցիներս ուրախութեամբ «Մշակի» էջերում կարդացինք, որ վերջապէս վաղուց մեր փափագած «հանրակրթական կուրսերը» բացվելու են Բալախանում առաջիկայ սեպտեմբեր ամսին։ Բայց դժբաղդաբար մեր յոյսերը չիրականացան։ Կուրսերը բացվեցին Բագուում, իսկ մենք ձեռնունայն մնացինք դարձեալ։ Որքան մեզ յայտնի է, չը բացվելու պատճառը դասախօսներ չը լինելն էր, իսկ միւս յարմարութիւնները կարելի էր շատ հեշտութեամբ ձեռք բերել։

Սկզբում մի երկուսը կային, որոնք համաձայնվել էին դասախօսել, բայց յետոյ դրանցից մէկը տեղափոխվեց Բագու, իսկ միւսը իրանից անկախ պատճառներով չը կարողացաւ։ Վերին ատիճանի անմխիթար երեւոյթ է, որ միայն երկուսը ցանկութիւն յայտնեցին, իսկ Բալախանում այնպիսի մարդիկ, որ կարողանային դասախօսել, շատ ու շատ կան. կարելի է ասել, որ Բալախանին Կովկասում համալսարաններով հարուստ քաղաքների հետ համարձակ կարող է մրցել։ Այս պակասը այսքան մեծ չափով զգալի չէր լինի, եթէ գոնէ Բալախանում գրադարան-ընթերցարան լինէր։ Ծառայողների ահագին տոկոսը ստիպված է բաւականանալ միայն գրասենեակների ստացած մի երկու թերթերով ու ամսագրերով։ Ծառայողներից նրանք, որ մի քիչ առատ են վարձատրվում, իրանք են բերել տալիս գրքեր ու կարդում, բայց այդպիսիներին մատներով կարելի է հաշուել։

Գրադարան չը լինելն է պատճառ, մեր կարծիքով, որ թղթախաղութիւնը այնքան խոր արմատներ է գցել մեր միջնակարգ դպրոցներն աւարտած երիտասարդների մէջ։ Հէնց որ 3—4 հոգի միասեղ հաւաքվում են, իսկոյն առաջ է գալիս կանաչ սեղանը ու սկսում են թղթախաղը։ Երեկոյեան ժամը 7-ից սկսվում է խաղը։ Խաղում են անդադար, իրանց կորցրած, մոռանում են գործ, հաց, ջուր։ Լուսանում է, բայց դեռ նրանք սեղանի շուրջն են, ատամները ուռում են աւելի կրելի, իսկ տանուլ տուողները—յետ բերել կրվածը։ այդ միջոցին նրանք մի-մի գաղան են դառած։ այժմ նախկին սերտ ընկերները օխերիմ թշնամի են եւ շատ անգամ ատուր ու դժբոյթ է լինում։ Այսպէս շարունակվում է խաղը մինչեւ որ բոլորովին ուժասպառ են լինում եւ այն ժամանակ միայն ստիպված են լինում թողնել սիրեցեալ կանաչ սեղանն ու արտում, տխուր, յոգնած, ջարդված, քնհատ, դեղնած երեսով, կարմրած աչքերով գնալ գործի։ Գահանում են այնպիսիները, որոնց փողը խաղի միջոցին սպառված լինելով, դիմում են պարտքի եւ նրանք տանուլ են տալիս 3—4 ամսվայ ռոճիկը եւ յետոյ տեսնում ես 60 ր. ստացող մարդը համարեա քաղցած է ապրում, իսկ թէ ինչքան հոգեպէս տանջվում է։

Միակ բանը, որ մխիթարական կարելի է համարել, դա նուիրարդիւնարերողների խորհրդի ժողովի Բաքանու ուսումնարանի շէնքում բացած կիրակնօրեայ դպրոցն է։ Դպրոցը բացվեց անցեալ 1900 թուականին։ Այժմ մօտ 150 աշակերտներ կան, գլխաւորապէս արհեստաւոր ու բանւոր դասակարգից։ Դասախօսները մեծ մասամբ խորհրդի ուսումնարանների վարժուհիներից են։ Վերին ատիճանի ցանկալի էր, որ մի կիրակնօրեայ դպրոց էլ Սարուխանի ուսումնարանի մէջ բացվէր, որովհետեւ ցանկացողների թիւը մեծ է։ Բաքանի ուսումնարանի շէնքը բաւականութիւն չէ տալիս եւ շատերն էլ հեռաւորութեան համար չեն գնում։

Անգործ լեզգիների թիւը շատ-շատացել է, այնպէս որ նրանք մի քանի կոպէկի համար պատրաստ են մարդասպանութիւն գործել, որով հետեւ օրերով քաղցած են մնում եւ հէնց որ մթնում է դուրս են գալիս որսի։ Անցեալ օրերը ժամը 8-ին խորհրդի ժողովի դեղատան պրովիզորի վրա կայարանից վերադառնալիս (ի դէպ ասել, որ կայարանից մինչեւ դեղատուն մի քանի քայլ է եւ մարդաշատ տեղ է) յարձակում է մէկը եւ հէնց որ ուզում է հատ փայտը գլխին իջեցնել, նա ցնցասպառ փախչում է ու հազիւ-հազ ազատվում, լաւ է որ յարձակվողը մէկն էր եղել, եթէ մի քանիսը լինէին, շատ դժուար էր ազատվելը։

Պ. Քաջ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւան, դեկտեմբերի 3-ին

Խնդրեմ բարեհաճէք երկտողիս մի անկիւն շնորհել «Մշակի» համարներից մէկում։

Սրանով պատիւ ունիմ յայտնելու այն անձանց, որոնք գրաւոր եւ թէ բանաւոր դիմել եւ դիմում են ինձ եւ հարցնում այն գումարի մասին, որ հաւաքված է հանգուցեալ Գրիգոր Զանչեանի յիշատակը կենդանի պահելու համար Երեւանի թեմական դպրոցում նրա անունով մի աշակերտ պահելու, որ վերոյիշեալ փողերը ինձ մօտ չեն գտնվում, այլ եւ պ. Ց. Տէր-Մարտիրոսեանցի հետ յանձնել եմ դրա համար ընտրված յանձնաժողովի անդամ պ. Կ. Կամսարականին։ Ուստի կը խնդրեի այդ անձնաւորութիւններին դիմել պ. Կամսարականին. բայց աւելի լաւ կը լինէր, որ պ. Կամսարականը լրագրութեան մէջ պարզէ, թէ որքան է ստացել եւ ինչ է արել։

Գ. Աղազադեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւանեան երկաթուղու հանդէսաւոր բացումը նշանակված է վաղը, դեկտեմբերի 13-ին, Երեւանում Թիֆլիսից եկած պատուաւոր հիւրերի ներկայութեամբ։ Նոյն օրը Երեւանեան նահանգապետ կոմս Տիզենհաուզենի մօտ տեղի կունենայ ճաշկերոյթ, իսկ հետեւեալ օրը, դեկտեմբերի 14-ին, առաւօտեան, հանդէսին մասնակցողները նորից կը վերադառնան Թիֆլիս։

—

Կովկասեան ցուցահանդէսի էքսպոնենտներից մեծ ոսկեայ մեդալներ ստացել են հետեւեալ անձինք եւ հիմնարկութիւնները.—Բագուի քաղաքային ուղղական, Թիֆլիսի Ալէքսանդրեան ապաստարանը, իշխանուհի Միւրսա, Թիֆլիսի այգեգործական «Ֆլորա» հիմնարկութիւնը, Ա. Զիլդադարով, իշխան Գ. Օրբելեանի, Մելիք-Բախտամեան, Գօրու կալուածատէր Գուրցելաձէ, Գ. Շադինեան, Մելիքով, Մաթէոսեան, Վոզնեսենսկի ուսումնարանը, Բաթխուդարեան, Զուբարեան եւ ընկերութիւնը, ինժենէր Գասէկ, Մայզլաշ, ինժեներ Խան-Ազեան, Միրզաբէկեան, Սարաջեվ, Սողոմոնեան, Մասսիս, Գ. Ալիբէկով եւ ընկ. Բագուում, նկարիչ Շիլդէր, Գօրու կանանց պրոգիմնազիան, Հալաբարի կանանց ուսումնարանը, Բօրժոմի բարեգործական ընկերութեան ուսումնարանը, Թիֆլիսի ռէալական ուսումնարանը, Թիֆլիսի այգեգործական ուսումնարանը, Ախալցխայի քաղաքային ուսումնարանը, այգեգործ Մայեր, բժիշկ Գրոզորովսկի, Մեսխիեվի լիտոգրաֆիան, Կաչայի լուսանկարչական արհեստանոցը, նկարիչ Սուրէնեանց, նկարիչ Գարաեվ, քանդակագործ Անդրիոլետտի եւ Թիֆլիսի գեղարուեստական ուսումնարանը։

—

Երեկ, դեկտեմբերի 11-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում քննվեց Ալէքսանդրոպոլի գաւառի Գեշիշքենդ գիւղի ծխատէր Գրիգոր քահանայ Միրզոյանցի գործը։ Միրզոյեանց մեղադրվում էր պրիստաւին անպատեալու գործում։ Երեւանի նահանգական դատարանը, քննելով այդ գործը, որոշել էր չորս ամսվայ բանտարկութիւն։ Դատաստանական պալատը, վերաքննելով գործը, արդար ճանաչեց Միրզոյեանց քահանային, փոխեց նախկին պատիժը, ատհանատիկելով նրան միայն եօթնօրեայ եկեղեցական ապաշխարութեամբ։ Մեղադրեալին պաշտպանում էր նրա որդին՝ Յարութիւն Միրզոյեան, որ եւ ներկայացել էր պալատը իր հօր փոխարէն։

—

Շաբաթ, դեկտեմբերի 8-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի նահանգի ազնուականների արտակարգ ժողովի նիստը, նախագահութեամբ ազնուականութեան պարագլուխ իշխան Մելիքովի։ Ժողովը հրաւիրված էր քննելու համար այն հարցը, թէ ինչպէս պէտք է գործադրել Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգների ազնուականութեանը Բարձրագոյն նուիրված տարեկան 40,000 ռուբլին։ Այդ հարցը նախօրօք մշակելու համար ընտրված մասնաժողովը, որին մասնակցել էին շատ ազնուականներ, առաջարկեց գործադրել նուիրված գումարը թոշակներ ատանելով բարձրագոյն ուսումնարաններում ազնուականների որդոց համար եւ նպատակելով նրանց կրթութեանը միջնակարգ դպրոցներում։ Քութայիսի նահանգի ազնուականութիւնը առաջարկում էր բանալ այդ գումարով մի գիւղատնտեսական միջնակարգ դպրոց երկու նահանգների ազնուականների որդոց համար։ Ժողովի նախագահի առաջարկութեամբ որոշվեց ազնուականութեան համար այս կարեւոր հարցի լուծումը առ այժմ յետաձգել, ի նկատի առնելով, որ ժողովին մասնակցում են ոչ բաւականաչափ բազմաթիւ անձինք եւ նախօրօք քննել այդ հարցը ազնուականութեան գաւառական ժողովներում։ Վերջում ժողովը հաստատեց Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին եւ Նորին Բարձրութիւն Մեծ-իշխան Միխայիլ Նիկոլաեւիչին ներկայացվելիք ուղերձները եւ ընտրեց մի քանի պատգամաւորների Նորին Մեծութեանը եւ Նորին Բարձրութեանը ամենահպատակ շնորհակալութիւն ժամուցանելու համար։

—

«Курьеръ» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ մայրաքաղաքի գրականագէտների մէջ միտք է ծագել հիմնելու առանձին կլուբ գրականութեամբ զբաղվող անձանց համար։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը սկզբունքով վճռել է թոյլ տալ կանանց մտնել միջնակարգ գիւղատնտեսական ուսումնարանները, իսկ մինչեւ այդ մասին առանձին կանոններ ատհանելը, կարգադրել է ընդունել նրանց յիշված ուսումնարաններում, իբրեւ կողմնակի ունկնդիրներ։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը միջոցներ է ձեռք առնում ապահովելու ճանապարհորդներին վագոններում անդադար կատարվող գողութիւններից։ Այս նպատակով մինիստրութիւնը հիմնում է գնացքներն ուղեկցողների պաշտօն եւ առանձին բաժանմունքներ գնացքների մէջ, ուր ճանապարհորդները կարող են յանձնել պահելու իրանց մօտ եղած դրամն եւ թանգագին իրեղէնները։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 1-ին հայ աղքատաց հոգաբարձու-

թեան երեկոյթն էր, որ շնորհիւ կանանց եւ օրիորդների եռանդուն աջակցութեան, շատ ազող էր։ Մուտքը ժողովրդական 1,300 ռուբլի է։ Երեկոյթը տեղիս թատրոնումն էր։ Գոհունակ է բերում եկեղեցական հոգաբարձութեան նախագահ Դ. Խոջայանին, որ երկու տարի է արդէն թատրոնում սարքում է հայկական երեկոյթներ»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 25-ին, քաղաքային օրիորդաց ուսումնարանի դահլիճում, տեղի ունեցաւ ս. Փրկիչ եկեղեցու երգեցողութեան խմբապետ պ. Տէր-Կարապետեանի կազմած երկսեռ քառաձայն խմբի հաւերգը, որի օգուտի կէսը յատկացնվելու է նոյն ուսումնարանի չքաւոր աներին։ Հաւերգը բաղկացած էր երեք մասից մինչեւ 17 երգերով, իսկ խումբը կազմված էր բաւական աչող, միայն մի քիչ տենորների եւ բասների պակասութիւն էր զգացվում։ Պ. Տէր-Կարապետեան ամբողջ երեք ամիս աշխատել էր եւ այդպիսով անպատրաստ անձերից կարողացել էր հաղիւ այդ բանը գլուխ բերել։ Երգերից գլխաւորապէս աչքի ընկան եւ լաւ տպաւորութիւն թողեցին հանդիսականների վրա՝ «Քեզի մեռնեմ, էջմիածինը», «Հայաստանի արեգակը», «Բասք-որսանը», «Ծօշին օր եօթ գիշեր», «Ահա հրեշտակ ասկեփետուր» երգերը, որոնք արժանացան բուռն ծափահարութիւնների եւ կրկնվեցին մի քանի անգամ։ Սօլոների մէջ գլխաւորապէս աչքի էր ընկնում օրիորդ Զարէլ Հայրապետեան, որի գեղեցիկ ձայնով միայնակ երգած «Մեծեռնակ» եւ «Հայաստան երկիր դրախտավայր» երգերը այնքան գեղեցիկ էին, որ արժանացան բուռն ծափահարութեան եւ անկեղծ հաճակրանքի։ Ամբողջովին մի քանի անգամ կրկնվեցին։ Վատ չէր նոյնպէս եւ սօլո պ. Ղալիոնճեանը»։

—

ԱՐԴԱՆՈՒՋԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 21-ին, այստեղի հայ-կաթոլիկների եկեղեցում պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց հայր Ղեւոնդ Ալիշանի յիշատակին. ներկայ էր երկու սեռից էլ մեծ բազմութիւն։ Հոգեհանգստից առաջ պատարագիչ հայր Գրիգորեանցը մի քարոզ խօսեց եւ նկարագրեց Աւարայրի բլբուլին իբրեւ գրական գործիչ, որ հարստացրեց հայ ազգաս գրականութիւնը ամենալաւ աշխատութիւններով»։

—

ԳՐԻԳՈՐԻՈՊՕԼԻՍԻՑ մեզ գրում են. «Թերսոնեան նահանգի Գրիգորիոպոլիս երբեմն հայաշատ քաղաքը իր ծերունազարդ քահանայի մահվամբ երկար ժամանակ մնացել էր առանց քահանայի. բայց վերջապէս, երկար ապասելուց յետոյ, մեզ մօտ տեղափոխվեց Հնչեակ աւանի երիտասարդ քահանայ Զուբարեանը, որ սկսեց իր գործը երիտասարդ ոյժերով եւ սակաւ միջոցում կարողացաւ գրաւել հասարակութեան հաճակրանքը։ Մանաւորապէս ուրախալի է, որ ինքը քահանան գլուխ կանգնելով երիտասարդութեան՝ եկեղեցու հաճար սիրողներից մի լաւ երգեցիկ քառաձայն խումբ կազմեց։ Խումբը երգում է Զորեքշեան սարկաւագի գրած նոտաներով»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Եղանակները անտանելի են, անձրեւ է, մինչդեռ անցեալ տարի արդէն ցրտել էր։ Շատ են երեխաների տարափոխիկ հիւանդութիւններ»։

—

ՎԵՐԻՆ-ՂԱՐԱՆԼՈՒՂ գիւղից (Նոր-Բայազէտի գաւառ) մեզ գրում են. «Մինչեւ այժմ դեռ չարունակվում են անձրեւները եւ չինութիւնների փուլ գալը։ Անձրեւները շատ մեծ վնասներ հասցրին գիւղացիներին։ Մեր գիւղում մօտ 20 տներ փուլ եկան եւ ամեն մի փլուածքի տակից դուրս բերինք կիսամեռ երեխաներ եւ անասուններ։ Եւ այսպէս է ոչ միայն մեր գիւղում։ Վալիազալու գիւղում Ղազար Փոթէեանի գոմը փուլ է եկել եւ սպանել 20 ոչխար։ Վերին-Գօղադարա գիւղում Բարսեղ Քօչէեանի գոմը փուլ է եկել եւ մինգամից սպանել է 80 ոչխար։ Մեր ծերերը պատմում են, թէ իրանց 70—80-ամեայ հասակում չեն տեսել, որ այսքան ամ.ձրեւ տեղար։ Մօտ 3—4 ամիս է, որ անձրեւներ են գալիս, եւ գիւղացիները այդ պատճառով ոչ մի հերկ չարեցին գարնան ցանքի համար»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔ գիւղից (Գօրու գաւառ) մեզ գրում են. «Ախալքալաք գիւղի կարիքներից մինն էլ ազբիւրի ջրի պակասութիւնն է։ Ճիշտ է, իշխ. Գրուզինսկիների ազբիւր կայ, բայց հեռաւորութեան պատճառով նրանցից օգտվել չէ լինում։ Ուստի մեր գիւղի հասկացող դասը մտադիր է վերոյիշեալ ազբիւրը բերել գիւղի մէջ։ Իշխ. Գրուզինսկիները ամենայն սիրով իրաւունք տուին ձրի օգտվելու իրանց ազբիւրի ակից։ Այդ ազբիւրի միջոցով միայն կարելի է ազատել մօտ 400 տուն այն տարափոխիկ հիւանդութիւններից, որ պատճառում է մեր Թեմամ գետակը։ Ազբիւր անց կացնելու համար իշխանութեան խնդրամատոյց ենք եղել փոխարինաբար տալու գիւղին մի հազար ռուբլի այն գումարից, որ հաւաքված է հացի չեմարանի անուամբ. բայց որովհետեւ նախահաշիւով երկու հազարից էլ աւել է հարկաւոր, ուստի գիւղի հասկացող դասը պարտաւորեցրեց մեր ամենայն սիրելի եւ իր բարեգործութեամբ յայտնի Ծով. ա. քահանայ Տէր-Գալստեանցին ժողովարարութիւն անելու։ Ցոյս ունենք որ օգնել կամեցողները օրինակ կառնեն հէնց ծերունի քահանայ Տէր-Գալստեանցից, որ իր վերջին կոպէկն անգամ չը խնայեց գիւղիս բարօրութեան հաճար։ Օգնել հարկաւոր է, որովհետեւ հիւանդութեան դէպքում մի օրինաւոր ֆելդշէր էլ չունենք, ուր մնաց թէ բժիշկ։ Ամառ թանչ, արիւնալոյծ հիւանդութիւն կար, որին սակաւ չը նպաստեց այժմեան մեր ջուրը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մօտ օրերումս Նօրվէգիայի մայրաքաղաքում, Խրիստիանիայում, համաձայն օրէնքի, կանայք առաջին անգամ մասնակցեցին քաղաքային ընտրութիւններին։ Նրանց մասնակցութեան շնորհիւ՝ այն մեծամասնութիւնը, որ կառավարում էր քաղաքային գործերը, ենթարկվեց էական փոփոխութիւնների։ Ընտրութիւններից առաջ այդ մեծամասնութիւնը կազմված էր ազատամտիներից, այն ինչ այժմ նա կազմվեց պահպանողականներից։ Ազատամիտները կորցրին 16 տեղ, պահպանողականները ձեռք բերին 5 եւ սոցիալիստները 7 տեղ։ Այժմ քաղաքային վարչութեան մէջ սոցիալիստները ունեն 14 ձայն։

—Կ. Գօլոից հաղորդում են «С. П. Вѣд.»-ին. «Զը նայելով որ շատերը հաւատացած էին, թէ մեծ-վեզիր Սայիդ-փաշայի դիրքը ամուր է, մօտ օրերումս մեծ-վեզիրը առաջին անգամ հրաժարականի խնդիր տուեց եւ սուլթանը առաջին անգամ մերժեց ընդունել նրա խնդիրը։ Հրաժարականի պատճառը հետեւեալն է.—Սայիդ-փաշան, կամենալով վերականգնել Բ. Դրան գործունէութեան անկախութիւնը, պահանջեց, որ ոչ մի մինիստր անմիջական յարաբերութիւններ չունենայ սուլթանի պալատի հետ։ Այս նպատակով նա արդիլեց ոստիկանութեան մինիստր Շէֆիկ-Բէյին պալատ գնալ։ Սակայն մի քանի օր առաջ մեծ-վեզիրը, պալատ գնալիս, հանդիպեց ոստիկանութեան մինիստրին, որ նոյնպէս Իլդիզ-Քիոսկ էր գնում։ Մեծ-վեզիրը հրամայեց նրան յետ դառնալ։ Շէֆիկ-բէյ կատարեց նրա հրամանը եւ յետ դարձաւ, բայց մի կէս ժամից յետոյ նորից գնաց պալատ։ Իմանալով այդ՝ Սայիդ-փաշան իսկոյն կամենում էր հրաժարական տալ, տեսնելով որ իր հրամանները չեն կատարվում իր ստորադրեալների կողմից եւ շատ լաւ հասկանալով, որ այդ բանը տեղի է ունենում շնորհիւ սուլթանի անձնական կարգադրութեան։ Սուլթանը չընդունեց մեծ-վեզիրի հրաժարականը եւ, ինչպէս հաւատացնում են, վեզիրը մնաց պաշտօնում իր կամքի հակառակ։ Աբդիւլ-Համիդ կանգնած է այժմ մի դժուար լուծելի հարցի առաջ,—կամ փոխել քիչ ժամանակ առաջ միայն նշանակված վեզիրին եւ կամ հրաժարվել իր երկարամեայ տիրապետութիւնից—անմիջական յարաբերութիւններ ունենալու ոստիկանութեան մինիստրի հետ։ Հաւանական է, որ վերջ ի վերջոյ սուլթանը կը դերադասէ չը խզել իր անմիջական յարաբերութիւնները մինիստրների հետ եւ արձակել մեծ-վեզիրին։

—Թիւրքական իշխանութիւնները, ինչպէս հաղորդում են ֆրանսիական լրագիրներին, անդադար ամեն տեսակ դժուարութիւններ են յարուցանում այժմ Ֆրանսիացիների առաջ, կամենալով այս կերպով վրէժխնդիր լինել Ֆրանսիական կառավարութիւնից վերջին ընդհարման համար։ Թիւրքական մաքսային իշխանութիւնները բարձր վճարներ են դնում ֆրանսիական ապրանքների վրա եւ ֆրանսիացիների բողոքները ոչ մի հետեւանքի չեն հասնում։ Զը նայելով որ առեւտրականները իրաւունք ունեն հարկերի վճարման փոխարէն գրաւ թողնել ապրանքների մի մասը, կ. Գօլոի իշխանութիւնները թոյլ չեն տալիս ֆրանսիացիներին օգտվելու այդ իրաւունքից եւ պահանջում են, որ մաքսերը անմիջապէս վճարվեն ամբողջովին ոսկով։ Բացի սրանից Բ. Դուռը,—ի հարկէ էլի վրէժխնդրութիւնից դրդված,—մի զօրաբաժին ուղարկեց դէպի ֆրանսիական սահմանները Աֆրիկայում։ Ֆրանսիական դեսպանը պահանջեց անմիջապէս հեռացնել այդ զօրաբաժինը սահմանագլխից, ապացուցանելով հակառակ դէպքում վճռական միջոցների դիմել։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկու եւ նրա ամուսին պրինցէսա Եւգենիա Մաքսիմիանովնայի ներկայութեամբ տեղի ունեցաւ փորձնական բժշկականութեան կայսերական ինստիտուտի տարեկան հանդիսաւոր ժողովը։

ԿԻԵՎ. Դեկտեմբերի 9-ին, Կիեւ-Վլադիմիրեան երկաթուղով բարեհաճեց շնորհ բերել Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ Իր Ամուսնու հետ։ Բարձր Հիւրին դիմաւորեցին երկրի կառավարիչը, նահանգապետը, գեներալներ, զինուորական եւ քաղաքացիական իշխանութեան ներկայացուցիչները եւ բազմաթիւ հասարակութիւն։ Զինուորական ուսումնարանների Օգոստափառ կառավարիչը ուղեւորվեց կադէտների կորպուսը՝ ներկայ լինելու երեկոյեան ժամերգութեանը կորպուսի յիսնամեայ յոբելեանի առիթով։

ԵՐԻՍՏԻԱՆԱ։ Թագաւորը սաստիկ չվէճական հետազօտող Գէդդինից, որ ճանապարհորդում է գիտական նպատակով, հետեւեալ հեռագիրը կաշխարից։ «Շնորհիւ չափազանց ալող ճանապարհորդութեան ամբողջ Տիբէտում, որ ես կատարեցի ուխտաւորի հագուստով, մօտեցայ Լհասայ քաղաքին։ Այնտեղ ինձ ճանաչեցին եւ ձերբակալեցին իշխանութիւնների հրամանով։ Ես չատ նշանաւոր գիտ արի, կորցնելով հատարեա իմ ամբողջ կարաւանը, բայց արշաւանքի աշխատանքները փրկված են։ Հանելով բրիտանական սիրապետութիւններին, ես, փոխարքայի հրամանով, ընդունվեցի մեծ պատուով։ Ինձ ամենասրտագին հիւրընկալութիւն ցոյց տուին։

ԲՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ։ Երբ Արգենտինեան կառավարութեան բոլոր բարեացակամ փորձերը՝ Չիլիի հետ հաշտաձայնութիւն կայացնելու նպատակով սահմանի վրա ճանապարհ բաց անելու վերաբերմամբ անաջող անցան, Չիլիի հանրապետութիւնը նոր տարաձայնութիւններ առաջ բերեց։ Չիլի պահանջում է, որ Արգենտինեան կառավարութիւնը հրաժարվի նրան պատկանեալ մի քանի չրջանների տիրապետութիւնից։ Չիլիի հանրապետութեան գործունէութեան այսպիսի եղանակը ստիպեց Արգենտինեան կառավարութեանը յետ կանչել իր դեսպանին Չիլիից։ Զը նայելով որ դրութիւնը լուրջ է, այնուամենայնիւ յոյս կայ, որ բանը պատերազմի չի հասնի։ Բուէնոս-Այրէսի փողոցները լիքն են ժողովրդով, որ անպայման կերպով հաւանութիւն է տալիս կառավարութեան վարմունքին։

ՊԱՐԻԶ։ Դեկտեմբերի 9-ին, ժողովրդական խումբ բազմութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ ժողովրդական ներկայացուցիչ Բոդէնի արձանի բացումը, որ զոհեց իր կեանքը 1851 թուին բարրիկատների վրա։ Հանդէսին հրաւիրված իշխանութիւնների ներկայացուցիչների գլուխ էր անցել նախագահ Լուբէ։ Ներկայ էին նոյնպէս բոլոր մինիստրները, պատգամաւորներ սենատի եւ պատգամաւորների ժողովի կողմից եւ Պարիզի քաղաքային խորհրդի նախագահ Դոստիէ երեք անդամների հետ միասին։ Ոստիկանութիւնը խիստ միջոցներ էր ձեռնարկել, որովհետեւ երկիւղ էին կրում ցոյցից։ Երբ ծածկոյթը վայր ընկաւ, սենատի նախագահ Ֆալիէր, պատգամաւորների ժողովի նախագահ Դէշանէլ եւ մինիստր-նախագահ Վալդէկ-Ռուսսօ ճառեր արտասանեցին, որոնց մէջ գովաբանում էին Բոդէնին։ Երեք ճառախօսներին էլ բուռն կերպով ծափահարում էին։ Երբ Դէշանէլ խիստ լեղով դատապարտում էր ցեղասպանը, ամբոխի միջից լսվեցին աղաղակներ. «Կեցցէ հանրապետութիւնը, թող կորչի նեսիօնալիզմը»։ Ապա Լուբէ եւ Վալդէկ-Ռուսսօ, ժողովրդի ջերմ ողջոյնների մէջ, հեռացան այն հրապարակից, որտեղ կանգնեցրած է արձանը. դրանից յետոյ վերջինին մօտեցաւ Դոստիէ եւ ճառ արտասանեց, թէպէտեւ նրա անունը չը կար ճառախօսների պաշտօնական ցանկում։ Նրա ճառի հէնց սկզբում ճառախօսին ընդհատում էին թշնամական բուսականութիւններ. լսվում էին աղաղակներ. «Թող կորչի Դոստիէ. կեցցէ հանրապետութիւնը»։ Շուտով Դոստիէին չը ջղջապատեց ոստիկանութիւնը, որին մեծ դժուարութեամբ աջողվեց ապառել թէ Դոստիէին եւ թէ քաղաքային խորհրդի միւս երեք անդամներին թշնամաբար տրամադրված ամբոխի միջից։—Երբ Լուբէ հասել էր արձանի հրապարակին, 12-րդ շրջանի մերը դիմեց նրան ողջոյնի ճառով։ Նախագահը պատասխանեց, թէ նա եկել է մասնակից լինելու այն տպաւորվածի յիշատակը տօնելուն, որ զոհ դարձաւ հանրապետութեան գաղափարին նուիրված լինելուն, այն հանրապետութեան, որի դէմ այն ժամանակվայ գործադրական իշխանութեան գլուխ կանգնած անձը քաղաքական յանցանք գործեց, թէպէտեւ երդումն էր տուել հաւատարիմ լինելու նրան։ Լուբէ աւելացրեց, որ ինքը թէեւ չէ տուել այդպիսի երդումն, բայց յանձն է առել ամբողջ ազգի վերաբերմամբ օրոշ պարտաւորութիւններ, որոնց եւ հաւատարիմ կը մնայ։ Ամեն մի ձեռնարկութեան, որ կը ձգտի միապետութեան, կը փչրվի կառավարութեան աչալրջութեան եւ հանրապետականների միութեան առաջ։—Դոստիէ արձանի առաջ ասաց. «Պարիզ քաղաքի անունով ընդունում եմ Բոդէնին կանգնեցրած արձանը, որ մեռաւ ժողովրդի հանրապետութեան եւ ազատութեան համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի 10-ին, Օլդենբուրգեան իշխանուհի Եւգենիա Մաքսիմիանովնայի ներկայութեամբ, տեղի ունեցաւ, գեղարուեստը քաջալերող ընկերութեան դահլիճում, ոսկեայ եւ արծաթեայ իրեղէնների միջազգային ցուցահանդէսի բացումը յօգուտ ս. Եւգենիայի հաստատութեան կից գտնվող հիւանդանոցների։

ՎԻՆԲՈՒՐԳ։ Բօէրական հրամանատար Գաարրէկ ընկաւ դեկտեմբերի 9-ի պատերազմում, որ սկսված էր անգլիական զօրաբաժնի դէմ Դոբէնբէրգում։

ՀԱՄԲՈՒՐԳ։ «Hamburg. Korresp.» լրագրի ասելով, «Ինիա» շոգենաւի վրա, որ պատկանում է Լիբանանի ընկերութեան, գտնված է մի մուկ, սատկած ժանտախտից։ Շոգենաւը անմիջապէս առանձացրվեց եւ ենթարկվեց սխատանութեան։ Այն անձինք, որոնք գտնվում են նաւահանգստի բժշկի հսկողութեան տակ, չեն հիւանդացել։

ՄԱԴՐԻԴ։ Լիսաբոնից հաղորդում են, թէ Մոզամբիկի նահանգապետը եւ Կապի գաղթականութեան նահանգապետը ստորագրել են մի հաշտաձայնութիւն, որ վերաբերում է Տրանսվալ ներմուծվող ապրանքներին։ Տրանսվալը այդ հաշտաձայնութեան մէջ ընդունված է, որպէս Անգլիային արդէն միացված երկիր։ Մի քանի լրագիրներ յանդիմանում են կառավարութեանը այն բանի համար, որ նա ընդունել է անգլիական տիրապետութիւնը այն ժամանակ, մինչ միւս պետութիւնները չեն արել այդ։

ՏՕՄՍԿ։ Վախճանվեց ժողովրդական գրող Նիկոլայ Իվանովիչ Նաւմով։

ՎԱԼՊԱՐԱՅՍՕ։ Տեղի են ունենում ասատիկ յուզմունքներ։ Հրատարակված են պրոկլամացիաներ՝ տարածելու համար ամբողջ Չիլիի հանրապետութեան մէջ։ Այդ պրոկլամացիայով կանչվում է ազգային պահապան զօրքի երկրորդ կոնտինգէնտը։ Զինուորական վարժութիւնների հրաւիրված զօրքերը չեն արձակվում։ Ցամաքային եւ ծովային զօրքի օֆիցէրները, որոնք գնացել էին արձակուրդի, յետ են կանչված։

ՍՏԱՆԴԵՐՏՕՆ։ Սպասվում է, որ պատերազմող բօէրները ժողով կը կազմեն անձնատուր լինելու հարցը քննելու համար։ Անցեալ չաթթ անձնատուր եղան 30 բօէրներ իրանց զէնքերով եւ ձիերով։ Այստեղի բուրդերներից 200 հոգի ծառայութեան մտան ազգային զօրքի մէջ։

ԼՕՆԴՕՆ։ Կիաչեներ ուղարկել է զինուորական մինիստրին երկրորդ զեկուցումն։ Նրա մէջ հաղորդվում են զանազան դէպքեր, երբ բօէրները հրացանի են բռնել աֆրիկական ընկերներին։ 16 դէպքերի վերաբերմամբ առաջ են բերված մանրամասնութիւններ։ Ապա Կիաչեներ հաղորդում է, թէ Կիմբերլէյի մօտ կատարված է 37 ապանութիւն եւ 1 ապանութիւն Օրանժեան հանրապետութեան հիւսիս-արեւմտեան մասում։ Վերջին 14 ամսվայ ընթացքում տեղի են ունեցել ապանութեան 23 դէպքեր։

11 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հակամանտաթային մասնաժողովը որոշեց վերացնել դեկտեմբերի 10-ից հետեւեալ սանիտարական միջոցները,—1) բժշկական քննութիւնը Բաթումից հեռացող նաւերի վերաբերմամբ եւ սանիտարական հսկողութիւնը, որին ենթարկվում էին Բաթումից երկաթուղով հեռացող ճանապարհորդները, 2) ճանապարհորդներ փոխադրող այն նաւերի պարտաւորութիւնը նաւային բժիշկներ ունենալու, որոնք հաղորդակցութիւն են պահում Սեւ-Ծովի նաւահանգիստների միջեւ։

Մի եւ նոյն ժամանակ ժանտաժողովը ենթադրեց հաստատել Թողնել նոյնութեամբ 1) սանիտարական — գործադիր ժանտաժողովների գործունէութիւնը այն նահանգներում, շրջաններում եւ քաղաքապետութիւնների մէջ, որոնք մօտ են Սեւ-Ծովի եզերքին եւ 2) բժշկական հսկողութիւնն այն նաւերի վրայ, որոնք լողում են Սեւ-ծովի ափերի նաւահանգիստների միջեւ այն ժամանակ, երբ նրանք նաւահանգիստ են մտնում։

ԼՕՆԴՕՆ։ Երեկոյեան լրագիրների տեղեկութիւններով, որոնք ստացված են Կրոնստադից, դեկտեմբերի 8-ին. մայոր Մակ-Միլինգ, որ 90 հոգուց բաղկացած մի զօրաբաժնով դուրս էր եկել Վրէդերֆօրտից, Վաալի հովտում ենթարկվեց գերազանց Թուլ բօէրների յանկարծակի յարձակմանը։ Սատիկ կուից յետոյ անգլիացիները յետ մղվեցին դէպի երկաթուղային գիծը։ Սպանված են 2 օֆիցէր եւ 5 զինուոր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ԴԱՒԱԹԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արէանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ս. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վէներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Ջիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Բ. Դզկիլիվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Ռաբինասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ցարկովսկի—6—7 ժ. նեարդային (հլեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ս. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրիաբար։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Ս. Ս. Առվանիզով—սանր. ծաղկահատ և բժշկական մերթեամարդ. գիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Ռժեկաուլես ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՈԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. ժանաւորապէս
ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергіевская ул., д. 12.

ԵՐԿՐԱՉԱՓ-ԻՆԺԵՆԷՐ
Յ. ԹԱՀԱԹՐԵԱՆ
Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գեոդէզիական աշխատութիւններ՝ ջուր ժառանգաբերելու, կանալիզացիայի, ոռոգման, հանքեր ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների չինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան յատակագծի վրա գրնահատական (оцѣночныя сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հատատելը օրէնսդրական կարգով եւ այլն։
ԲԱԳՈՒ, «Դիւրցօվայա Նովէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահրուզաղեանի տուն, № 39, բակում։
89—100

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաթենիկ
ՑԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարգարիտեանցի։
(հ. կ.) 26—60

☛ 15 ԿՕՊԵԿ ☚
ՊԱՏԻ ՄԵԾ ՕՐԱՑՈՅՑ
1902 ԹՒԱԿԱՆԻ
Ծախվում է Շարաբովի խանութում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, «Թիֆլիսի Ժողովարանի» կողքին, տուն Զուբալովի, № 8.
1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, դեկտեմբերի 15-ին,
նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
սովորական կարգով։
(12 եւ 14) 1—2

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
Գրախանութում վաճառվում են
«Թատրոն», հանդէս, Ա. Թարխանեանի, իւրաքանչիւր օրինակ 2 ր.
«Հայկական հին դպրութեան պատմութիւն» (Դ—ԺԳ դար) Զարբհանալեանի 2 ր.
«Հանդէս նոր հայախօսութեան», Ստ. Նազարեանի, ժամ ա. եւ բ. 4 ր.
«Գիւլիսանա», ռուս., Ստ. Նազար. (կազմ.) 2 ր.
«Հրապարակախօս ձայն», Ս. Շահ. (սակաւաթիւ) » 2 ր. »
«Աժառնային նամակներ», » » 1 ր. 50 կ.
«Ցիշողութիւններ Վարդանանց տօնի առթիւ . . 75 կ.
«Խորտակված կեանք», վէպ, Լ. Մանուչլեանի 1 ր.
«Արցախ», Մակար եպ. Բարխուդ. 1 ր. 50 կ.
«Աղուանից երկիր եւ դրացիք», Մակար եպ. Բարխուդարեանի 1 ր.
Պատմութիւն հայոց Մովսէս Խորենացու, թարգ. Խ. Ստեփանէի 1 ր. 50 կ.
«Զամբռ. Սիմէօն կաթողիկոսի, 1 ր.
«Ուխտանէս եպիսկոպոս» պատմութիւն հայոց ա. եւ բ. մաս. 1 ր. 20 կ.
«Մատթէոս Ուռհայեցի», ժամանակ. 1 ր. 20 կ.
«Խորենացու պատմութեան ուսումնասիրութ». Գ. Տէր-Մկրտչեանի 35 կ.
«Պատմութիւն հայոց գրականութեան, Ստ. Պալասանցի 50 կ.
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ Гутенбергъ», Г. Галустяну, Лорисъ.-Меликовская, № 11.
1—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱՖԱՆՈՒԹՈՒՄ
Կամիլ Ֆլամարիոնի
ՈՒՐԱՆԻԱ
Աստղագիտ. վէպը
Թարգ. Ֆրանսերէնից Հ. Առաքելեանի
Գինն է 1 ր. 50 կ. 9—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ԼՈՒՍՈՅՑ
մազերը բուսացնելու եւ ամրացնելու համար, աշնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր մշակ
ԶՈՒՏ ԿԱԹԸ
երեսին քնջութիւն եւ ապնակութիւն տալու համար, աշնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնջութիւն եւ ապնակութիւն։ Այդ դները չափաւոր են. մեծ. արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Շահագրգիռներին պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով։
12—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
յայտնում է պ.պ. անդամներին, կանդիդատներին եւ մշտական յաճախորդներին, որ 1902 թ-ի տոմսակները կը տրվեն միմիայն ժողովարանի գրասենեակում նոյեմբերի 21-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը։
Այն անդամները եւ կանդիդատները, որոնք չեն վերանորոգի իրանց մուտքի տոմսակները մինչեւ դեկտեմբերի 15-ը, հաշուում են ժողովարանից կամաւոր դուրս եկած, բայց կարող են մի տարվայ ընթացքում նորից մտնել՝ վճարելով 24 ռուբլի։
1—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Լեւոն Կարապետեան
Դարմանում է տաքութիւն, չինում է պլոմբներ, ոսկէ պռակներ արմատների վրա նստացնելու եւ կեղծ տաքութիւն ոսկէ եւ կաուչուկէ պլոմբինկաների վրա։
Ընդունում է հիւանդներ ժամը 9-ից առաւօտեան մինչեւ ժամը 7 երեկոյեան։
Սոլոլակակայա փողոցի վրա, տուն Միրզոեւի № 6.
26—30

Կիրակի, դեկտեմբերի 16-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ,
Ցօգուտ Թիֆլիսի Հայուհեաց Ընկերութեան
տեղի կունենայ
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
երաժշտական բաժնով
Երաժշտական բաժնում մասնակցում են սիրողներ-մանդոլինիստներ Դ. Մ. Փուղինեանի ղեկավարութեամբ, նոյնպէս բալալայկի, ցիտրի, գիտարայի վրա նուագողներ եւ օրօ երգիչներ։ Երաժշտական բաժնի սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 9-ին
Պարերի միջոցում մի խումբ սիրողներ Մ. Գ. Գ. ղեկավարութեամբ կերգեն մի քանի խմբական երգեր թատրոնական բեմի վրա։
Մուտքի գինն է 2 ր. 20 կոպ.
3—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը.
Մէլիք-Կարագեօզեան Գ., Գերմանիայի հայ ուսանողութիւնը, Թիֆլ. 1901 թ. գ. 20 կ.
» » Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկա-Հայաստանի համար, Թիֆլիս, 1901 թ, գ. 35 կ.
Մելեան Մեսրոպ քահ., Ընթերցողների ուշադրութեանը, Բաթում, 1901 թ. գ. 10 կ.
Բենիկ վարդապետ Քարոզչական թռթռվանքներ, Թիֆլիս, 1901 թ. գ. 25 կ.
Ֆարրարի քարոզներ, Թարգմանութիւն Սեդրակ Մանդինեանի, Վղրշ. 1901 թ. գ. 1 ր.
Գոռչեանց Գերմ, Ցունամ, վիպակ, Թիֆլիս, 1901 թ. գ. 1 ր.
Բուդուղեան Ա. բժ., Կարիք եւ Բարեգործութիւն, Նոր.-Նախիջ., 1901 թ. գ. 15 կ.
Կուկլին Մ., Ոգնիներ, պատկերազարդ մանկական գրուածք, Թիֆլ. 1901 թ. գ. 8 կ.
Յարութիւնեան Ի., 1) Կին վիպագիր Ե. Սպիրի, Թիֆլ. 1901 թ. գ. 15 կոպ., 2) Հայոց գիրը—1 ր. 50 կ., 3) Հանառօտ տրամաբանութիւն—1 ր., 4) Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութ. եւ հայ ուսանողները—40 կ., 5) Ներսիսեան դպրոցի տարեի առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը—40 կ., 6) Նոյնը, երկրորդ ճանապարհորդութիւնը 20 կ., 7) Ստեփաննոս Գալատանեան—25 կ., 8) Աչկերտի յուշատետրը—30 կ., 9) Զգացմունքի աշխարհ (Վէրք Հայաստանի)—30 կ., 10) Յանահին—30 կ., 11) Իմ օրագիրը—25 կ., 12) Ծաղկոց (մանկական պարէզ)—10 կ.
Նոյն հեղինակի Թարգմանութիւնները.—1) Գեստալոցցի, Լինհարդ եւ Գերտրուդ, վէպ—1 ր. 50 կ. 2) Հուքսլէյ (Դէքսլի), Տարերք բնական գիտութեանց—40 կ., 3) Դր. Նաուման, Էրգրուպ—15 կ., 4) Ի. Սպիրի, Վարդ Բեսլին—10 կ., 5) Ուռենց Ցովսէփ—15 կ., 6) Ս.ծարած Մօնի—15 կ., 7) Ալպեան հովիւ 20 կ., 8) Հայրենազուրկ—50 կ. եւ 9) Եօկայի, Ուրացողը—20 կ.
Նոյն տեղը բաժանորդագրութիւն է ընդունվում տեղական եւ օտար քաղաքների լրագիրների համար, խմբագրական պայմաններով։
Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (հ.) 3—3

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
ФАБР. С. СІУ и К° МОСКВА.

Կօնֆէտի եւ Շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամել մրգեղէնից, մօնպանսէ, մարմելատ, պաստիլա, զէֆիր եւ այլն։
Պատուէրներով դիմել գործարան. Գավրօվսկայա փողոց, սեփական տուն, տելէֆօն № 362.
Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէջուբեանների տունը, տելէֆօն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօլօնիական խանութներում։
Բագուի եւ Բաքուի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Միքայէլեան փող., տ. Աշումեանի։
99—100

Дозволено Цензурою, Тифлисъ, 11 Декабря 1901 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. В.-Ванкская ул.